Արձանագրություն N 2 / Протокол № 2

Գնահատող հանձնաժողովի նիստի / заседания оценочной комиссии

1. **Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագիր), ապրանքի ձեռքբերման, նիստի անցկացման մասին** / Данные о заказчике, процедура (код), приобретение продукции, проведение встречи

Պատվիրատու / Заказчик	**Աշոցքի համայնքապետարան** / Муниципалитет Ашоцк
Գտնվելու վայրը / Адрес	**գ. Աշոցք, Հրապարակ 1** / село Ашоцк, Грапарак 1
Ընթացակարգի ծածկագիրը / Код процедуры	**ՀՀ ՇՄ ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/67**
Ձեռքբերվող ապրանքի անվանումը / Наименование приобретаемой услуги	**Շինանյութ** / Строительный материал
Նիստի անցկացման վայրը / Место встречи	**Աշոցքի համայնքապետարան** / Муниципалитет Ашоцк
Նիստի անցկացման օրը և ժամը / Дата и время встречи	**28 հոկտեմբերի 2026թ.-03 նոյեմբերի 2026թ.** / 28 октября 2026 г.-03 ноября 2026 г
Նիստի անցկացման նպատակը / Цель встречи	**Հայտերի բացում և գնահատում** / Вскрытие и оценка заявок

2. **Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի մասին** / Информация о составе комитета, присутствующего на заседании

Հանձնաժողովի նախագահ / Председатель комитета	**Արտուշ Մանուկյան** / Артуш Манукян
Հանձնաժողովի անդամներ / Члены комитета	**Արման Նալբանդյան** / Арман Налбандян
	Լիդա Քերոբյան / Лида Керобян
Քարտուղար / Секретарь	**Անուշ Խաչատրյան** / Ануш Хачатян
Այլ տեղեկատվություն / Другая информация	

3. **Տվյալներ գնման անհրաժեշտության, գնման ձևի ընտրության հիմնավորման վերաբերյալ** / Данные о необходимости приобретения, обоснование выбора способа приобретения

Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը / Необходимость покупки и обоснование выбора способа покупки	**«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետ** / Статья 18, пункт 3 Закона РА «О закупках» **ՀՀ Կառավարության 2017 թ. մայիսի 18-ի 534-Ն Որոշում** / Решение Правительства РА № 534-Н от 18 мая 2017 года **Աշոցք համայնքի ղեկավարի 2026 թ. հոկտեմբերի 14-ի 140-Ա Կարգադրություն** / Распоряжение Главы Ашоцкого сельского поселения № 140-А от 14 октября 2026 г

4. **Տվյալներ մասնակիցների մասին** / Данные об участниках

Հայտը ներկայացրած մասնակիցների քանակ / Количество участников, подавших заявку	**1 (մեկ** / один)
Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը / Имя, рабочий адрес и номер телефона заявителя	**1. «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ** / ООО «ЛЛЛ МЕНЕДЖМЕНТ» **ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Ռուստամյան 13/4** / РА, г. Ереван, Ачапняк, ул. Рустамяна 13/4 **llmanagment2025@gmail.com/044755456**

Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0 / Решение принято: за – 4, против – 0.

Հրավերում կատարված փոփոխություններ, հարցումներ և պարզաբանումներ, ներկայացված հիմնավորումներ / Изменения, внесенные в приглашение, запросы и разъяснения, предоставленные обоснования

Գնման վերաբերյալ ստացված հարցումներ և ներկայացված պարզաբանումներ / Получены запросы на закупку и предоставлены разъяснения	Հարցադրում 1 Հնարավո՞ր է մասնակցել միայն սառնարանային խցիկի մատակարարման չափաբաժնին, և ո՞ր համարի չափաբաժինն է դրան վերաբերում: Ներկայացված երկու տեխնիկական բնութագրերի ֆայլերն ունեն նույն բովանդակությունը և ներառում են նաև բեռնատար ավտոմեքենայի պահանջները: Պարզաբանում 1 Գնման ընթացակարգը կազմակերպված է 2 առանձին չափաբաժնով: Համաձայն հրավերի 1-ին մասի 4.1 կետի՝ մասնակիցն իրավունք ունի հայտ ներկայացնելու միայն 1-ին չափաբաժնի համար, որը վերաբերում է «արդյունաբերական սառնարաններ» (սառնարանային խցիկ) գնման առարկային՝ 2,500,000 ՀՀ դրամ նախահաշվային գնով:

Հարցադրում 2
Խցիկը պե՞տք է փաստացի ապահովի և պահպանի −25°C ջերմաստիճան, թե՞ նախատեսված է մինչև −4°C պայմաններում մսամթերքի պահպանման համար, իսկ −25°C-ից մինչև +25°C միջակայքը վերաբերում է միայն կարգավորիչի կարգավորման հնարավորությանը:
Պարզաբանում 2
−25°C-ից մինչև +25°C միջակայքը սարքավորման կարգավորման և վերահսկման տեխնիկական հնարավորությունն է: Աշխատանքային ռեժիմի առումով սարքավորումը պետք է ապահովի մինչև −4°C ջերմաստիճանային միջակայքի սահմանումն ու պահպանումը:
Հարցադրում 3
Ի՞նչ քանակությամբ մսամթերք է նախատեսվում միաժամանակ պահել և օրական ներմուծել խցիկ: Որքա՞ն է մսամթերքի մուտքային ջերմաստիճանը, և ի՞նչ ժամկետում պետք է այն հասցվի պահանջվող ջերմաստիճանին:
Պարզաբանում 3
Խցիկը նախատեսված է մեկ օրվա համար մոտ 800 կգ մսամթերքի պահպանման համար: Մսամթերքի մուտքային ջերմաստիճանը −20°C է, և այն պետք է պահանջվող ջերմաստիճանային ռեժիմին հասցվի մոտ 8 ժամվա ընթացքում:
Հարցադրում 4
Նշված չափերը խցիկի ներքի՞ն, թե՞ արտաքին չափերն են: Սահմանվա՞ծ են պատերի, առաստաղի և հատակի ջերմամեկուսացման հաստության ու նյութի պահանջներ: Պահանջվո՞ւմ է մսի կախման ռելսային համակարգ:
Պարզաբանում 4
Տեխնիկական բնութագրում սահմանված չափսերը (լայնություն՝ 240 սմ, բարձրություն՝ 230 սմ, երկարություն՝ 400 սմ) խցիկի արտաքին չափերն են: Պատերի, առաստաղի և հատակի ջերմամեկուսացման հաստությունը պետք է լինի 10 սմ: Խցիկում պահանջվում է մսի կախման ռելսային համակարգի առկայություն:
Հարցադրում 5
Խնդրում ենք հայտնել տեղադրման ճշգրիտ վայրը, առկա էլեկտրասնուցումը՝ 220 Վ կամ 380 Վ, և մատակարարման ու տեղադրման պահանջվող ժամկետը:
Պարզաբանում 5
Մատակարարման և տեղադրման վայրը ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքն է, որտեղ առկա է 380 Վ (եռաֆազ) էլեկտրասնուցում: Մատակարարման և տեղադրման պահանջվող ժամկետը պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օր է:
Հարցադրում 6
Խցիկի համար նշված 2,500,000 ՀՀ դրամ նախահաշվային գինը ներառո՞ւմ է ԱԱՀ-ն, փոխադրումը, տեղադրումը և գործարկումը:
Պարզաբանում 6
Չափաբաժինների համար ներկայացված նախահաշվային գները ներառում են ԱԱՀ-ն, ինչպես նաև փոխադրման, տեղադրման, գործարկման, ապահովագրման, տուրքերի, հարկերի և շահագործման հրահանգների տրամադրման հետ կապված բոլոր ծախսերը:
Հարցադրում 7

	Քանի որ գնման առարկայի անվանման մեջ նշված է լիզինգով ձեռքբերում, խնդրում ենք պարզաբանել մատակարարին վճարման կարգը, ժամկետները և լիզինգային կազմակերպության մասնակցությունը: Պարզաբանում 7 Ընթացակարգի անվանման մեջ «լիզինգով ձեռքբերում» ձևակերպումը արտացոլում է պատվիրատուի ֆինանսավորման ծրագիրը: Տեղեկացնում ենք, որ Գնորդը դեռևս չունի կնքված լիզինգի պայմանագիր, այդ իսկ պատճառով գնման ընթացակարգը հայտարարվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 15.6-րդ կետի համաձայն: Վճարումը կկատարվի լիզինգի պայմանագիրը կնքելուց հետո և ապրանքի մատակարարումը կատարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով, հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա: Վճարումն իրականացվում է լիզինգի պայմանագրով սահմանված կարգով: Հարցադրում 7 Պայմանագրի նախագծում առկա են չլրացված դաշտեր և տեխնիկական նշումներ, իսկ վճարման ու երաշխիքային պայմանների հատվածում՝ անհստակ ձևակերպումներ: Խնդրում ենք տրամադրել հստակեցված նախագիծը՝ մատակարարման, վճարման, երաշխիքի և տույժերի պայմաններով: Պարզաբանում 7 Պայմանագրի նախագծում առկա չլրացված դաշտերը և տեխնիկական նշումները տիպային օրինակելի ձևի մասն են, և դրանք լրացվում են ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու փուլում: Պայմանագրի վերջնական տեքստը կձևավորվի հրավերի պայմաններին, հայտում ներկայացված առաջարկին և ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան: Մատակարարումը և տեղադրումը պետք է իրականացվի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: Վճարումը կկատարվի լիզինգով պայմանագիր կնքելուց հետո՝ ապրանքի մատակարարումը կատարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով, հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա: Մասնակիցը պայմանագրի հետ ներկայացնում է պայմանագրի ապահովում՝ նախահաշվային գնի 10 տոկոսի չափով, ինչպես նաև որակի ապահովում՝ նախահաշվային գնի 15 տոկոսի չափով: Սառնարանային խցիկի երաշխիքային ժամկետը կազմում է ոչ պակաս, քան 12 ամիս, ինչը գերակայում է տիպային օրինակելի տեքստում առկա ձևակերպման նկատմամբ: Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով, ներառյալ տույժերի կիրառումը:
Հրավերում կատարված փոփոխություններ / Изменения, внесенные в приглашение	**Հրավերում փոփոխություններ չեն կատարվել** / Никаких изменений в приглашение внесено не было.
Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջներիի տեսակետից՝ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ ներկայացված հիմնավորումներ / Представлены обоснования особенностей предмета закупки с точки зрения обеспечения конкуренции и	**Հիմնավորումներ չեն ներկայացվել** / Никаких обоснований предоставлено не было

исключения дискриминационных требований, предусмотренных законодательством	

6. **Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտի մասին (բավարար/անբավարար (նշել պատճառը))** / Данные о заявке, поданной участником, занявшим первое место (удовлетворительно/неудовлетворительно (укажите причину))

Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի հրավերով սահմանված պայմանների համապատասխան կազմված լինելու մասին / Информация о соответствии представленных участником документов условиям, изложенным в приглашении	**«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ / ООО «ЛЛЛ МЕНЕДЖМЕНТ»**	**բավարար** / достаточный

Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0 , Решение принято: за - 4, против - 0

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով ինչպես նաև ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.11 կետով գնահատող հանձնաժողովն արձանագրեց.

Գնահատող հանձնաժողովի կողմից նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և համակարգի միջոցով «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ին պատշաճ ծանուցելու արդյունքում առաջարկվել է սահմանված ժամկետում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները (դիմում-հայտարարությունում իրական շահառուների տեղեկատվության լրացումը / հավելված 1.3-ի ներկայացումը, էլեկտրոնային թվային ստորագրության ապահովումը և առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի ներկայացումը):

Руководствуясь статьей 34 Закона РА «О закупках», Порядком «Проведения электронного аукциона», утвержденным постановлением Правительства РА от 18 мая 2017 года № 534-Н, Порядком «Организации процесса закупок», утвержденным постановлением Правительства РА от 4 мая 2017 года № 526-Н, а также пунктом 8.11 части 1 приглашения процедуры, оценочная комиссия зафиксировала:

В результате приостановления заседания оценочной комиссией на один рабочий день и надлежащего уведомления участника через систему было предложено в установленный срок устранить несоответствия, зафиксированные в заявке (заполнение таблицы реальных бенефициаров в заявлении-декларации / представление Приложения 1.3, обеспечение электронной цифровой подписи и представление технических характеристик предлагаемых товаров).

Քանի որ մասնակիցը սահմանված ժամկետում համակարգի միջոցով ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, հանձնաժողովը որոշեց.

«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատել բավարար՝ համաձայն հրավերի 1-ին մասի 8.11 կետի պահանջների:

Մասնակցին հայտարարել ընտրված մասնակից (հաղթող) համապատասխան չափաբաժնի (չափաբաժինների) մասով:

Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

Так как участник в установленный срок представил через систему исправленные варианты зафиксированных несоответствий (исправление заявки), комиссия решила:

Оценить заявку, представленную ООО «ЛЛЛ МЕНЕДЖМЕНТ», как удовлетворительную в соответствии с требованиями пункта 8.11 части 1 приглашения. Объявить участника отобранным участником (победителем) по соответствующему лоту (лотам).

Принято решение: за — 4, против — 0

Հանձնաժողովը նախագահող՝
Председатель комитета _____ **Ա. Մանուկյան / А. Манукян**

Հանձնաժողովի անդամներ՝
Члены комитета _____ **Ա. Նալբանդյան / А. Налбандян**

_____ **Լ. Քերոբյան / Л. Керобян**

Քարտուղար՝
Секретарь _____ **Ա. Խաչատրյան / А. Хачатрян**